ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՔԵՄԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ

Կ. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

1920 թ. գարնանը մաքրելով Հյուսիսային Կովկասը սպիտակգվարդիականներից, Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակն ընդհուպ մոտենում է Անդրկովկասի սահմաններին։ Անդրկովկասյան հանրապետություններից առաջինը խորհրդայնացվում է Ադրբեջանը (ապրիլի 28-ին)։ Դրան մեծապես նպաստել էր Անկարայում ձևավորված Թուրքիայի Ազգային կառավարությունը՝ Մուստաֆա Քեմալ փաշայի գլխավորությամբ։ Վերջինս 1920 թ. ապրիլի 26-ին նամակով դիմեց Խորհրդային Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Վ. Ի. Լենինին։ Նամակում շարադրված էին քեմալականների արտաքին քաղաքականության որոշ դրույթներ, առաջարկվում էր հաստատել դիվանագիտական սերտ հարաբերություններ և ռազմական դաշինք կնքել ընդդեմ իմպերիալիզմի։ Նշվում էր, որ անհրաժեշտության դեպքում Թուրքիան պատրաստ է ռազմական գործողություններ սկսել «իմպերիալիստական Հայաստանի դեմ»[1]։ Նամակը Թուրքիայի նորընտիր Ազգային կառավարության առաջին արտաքին քաղաքական ակտն էր։

Իրենց «անկեղծ» մտադրություններն ապացուցելու համար քեմալականները նպաստեցին Ադրբեջանի խորհրդայնացմանը։ Սա ընդունում էին նաև խորհրդային իշխանությունները։ 1920 թ. մայիսի 4-ին Կովկասյան ռազմաճակատի Ռազմահեղափոխական խորհրդի անդամներ Ս. Կիրովը և Գրիգորի (Սերգո) Օրջոնիկիձեն զեկուցում էին Վ. Լենինին. «Բաքվում հեղափոխության օգտին բավականին ակտիվ դեր խաղացին Թուրք ասկյարները և սպաները...»[2]։ Ավելի միանշանակ նշվում էր Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի 1919—1920 թթ. տարեկան հաշվետվության մեջ. «Քեմալականները մեզ հետ կապերի մեջ մտան Ադրբեջանի միջոցով, որտեղ նրանց համախոհների խումբն օժանդակել էր հեղաշրջմանը և այն բանին, որպեսզի ադրբեջանական հեղափոխական կառավարությունը հրավիրեր կարմիր զորքերին»[3]։

Այսպիսով, քեմալաբոլշևիկյան համագործակցության առաջին Թույլ հարվածն իր վրա ընդունեց Ադրբեջանը։ Հռչակվելով խորհրդային, այն Մոսկվայի կողմից հայտարարվեց Արևելքում «հեղափոխության առաջադիրք», որտեղից բոլշևիկները պետք է «գրոհեին մենշևիկների և դաշնակցականների ազգային բուրժուական հակահեղափոխական կառավարությունները»[4]։ Եվ իրոք, դժվար չէր կռահել, որ «Ադրբեջանում հաստատվելուց հետո, բոլշևիկներն հետևյալ քայլը պիտի լիներ՝ մտնել նաև Վրաստան ու Հայաստան։ Ժամանակի խնդիր էր սա»[5]։

Ամրապնդվելով Ադրբեջանում, խորհրդային իշխանությունները ձեռնամուխ եղան նաև Թուրքիայի հետ անմիջական հաղորդակցության կապ

---

1 Документы внешней политики СССР, т. II, М., 1958, с. 725—726.

2 *Տե՛ս* А. Н. Хейфец. Влияние СССР на угнетенные народы Востока (Великий Октябрь и народы Востока), М., 1957, с. 56.

3 *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), Ե., 1972, էջ 478։*

4 Г. К. Орджоникидзе. Избранные статьи, М., 1957, с. 56.

5 *Հ. Քաջազնունի, Հ. Յ. Դաշնակցությունը անցյալ չունի այլևս, Ե., 1994, էջ 35։*

ստեղծելու գործին։ Այն պետք է հաստատվեր Հայաստանի վրայով։ Ըստ բոլշևիկների՝ Ղարաբաղ-Զանգեզուր-Նախիջևան շղթան դառնալու էր մի մայրուղի, որով համաշխարհային հեղափոխության գաղափարները, Կարմիր բանակի սվիններով վրա, պետք է տարածվեին դեպի «նիրհից արթնացող Արևելք»։

Ելնելով նրանից, որ հայկական այդ տարածքների վրա մեծ հավակնություն ուներ Ադրբեջանը, 11-րդ Կարմիր բանակի ղեկավարությունը, հենվելով նրա «արդար պահանջների վրա», վերջնագրեր է ներկայացնում Հայաստանի կառավարությանը՝ Ղարաբաղից և Զանգեզուրից հայկական զորամիավորումները հեռացնելու պահանջով, սպառնալով հակառակ դեպքում դրանք գրավել ուժով։ Այդ մասին է նշվում Կովկասյան ռազմաճակատի և 11-րդ բանակի Ռազմահեղափոխական խորհուրդների (Օրջոնիկիձե, Կիրով, Մեխոնոշին, Լևանդովսկի) 1920 թ. մայիսի 1-ին Բաքվից ուղարկած վերջնագրում[6]։ Դրա հետ միաժամանակ մի շարք բոլշևիկ ղեկավար գործիչներ (Օրջոնիկիձե, Նարիմանով, Մդիվանի և այլք) Մոսկվայից պահանջում են Վրաստանը և Հայաստանը անմիջապես ռազմական ուժով խորհրդայնացնելու թույլտվություն։ Այս հարցի վերաբերյալ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի մայիսի 25-ի որոշման մեջ նշվում էր. «Շարունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ, մեղ վրա չվերցնելով ռուսական զորքերի օգնությամբ անմիջական խորհրդայնացման նախաձեռնությունը»[7]։ Բայց սա բնավ չէր վերաբերում Ղարաբաղ-Զանգեզուր-Նախիջևան գծին, 1920 թ. ամռանը խորհրդային զորքերը մտնում են հայկական այդ տարածքները։ Հայաստանը փաստորեն ներքաշվում է չհայտարարված պատերազմի մեջ խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի հետ։ Նման իրավիճակ էր հասունանում նաև Թուրքիայի հետ, որն իր ներխուժման սպառնալիքի տակ էր պահում Հայաստանի արևմտյան սահմանները։

1920 թ. մայիսի վերջին Մոսկվայում բանակցություններ են սկսվում խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև։ Խորհրդային պատվիրակությունը, հանձինս Ռուսաստանի կառավարության արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինի և նրա տեղակալ հայազգի Լ. Կարախանի, պատրաստակամություն է հայտնում կնքել պայմանագիր և բարեկամական ամուր հարաբերություններ հաստատել երկու ժողովուրդների միջև։ Իր հերթին հայկական պատվիրակությունը, Լ. Շանթի ղեկավարությամբ, ընդգծում էր Ռուսաստանի կողմից Հայաստանի անկախությունը ճանաչելու անհրաժեշտությունը, դնում էր նրա ներքին գործերին չմիջամտելու և այլ պահանջներ։

Ռուս-հայկական բանակցությունների վրա բացասական ազդեցություն էին գործում Բաքվից և Թուրքիայից, չէ՞ որ որոշվում էր Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի հարցը։ Ինչպես Լ. Շանթն էր հաղորդում Հայաստանի կառավարությանը 1920 թ. հուլիսի 1-ին, բանակցությունների դժվարությունը կապված էր հայ-ադրբեջանական սահմանի որոշման հարցի հետ[8]։ Բանակցությունների ընթացքում Բաքվի վարած քաղաքականության մասին տեղեկանում ենք Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանի 1920 թ. հուլիսի 31-ի զեկուցումից Հայաստանի արտգործնախարարին. «Ադրբեջանի ներկայիս քաղաքականության գլխավոր ուշադրությունն ուղղված է այն թույլ և հեռավոր հնարավորության վրա, որ հայ-ռուսական բանակցությունների արդյունքում Զանգեզուրը և Ղարաբաղը կարող են անցնել Հայաստանին։ Այդ պատճառով ոտքի են հանվում ամբողջ հեղկոմը, թաթար ակտիվիստները, հայ կոմունիստների մեծ

---

6 Հայաստանի Հանրապետության Պետական կենտրոնական պատմության արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 274։

7 Հայոց պատմություն, Ե., 1993, էջ 142։

8 Нагорный Карабах в 1918—1923 гг., Е., 1992, с. 519.

մասը, որոնք գնդակոծում են Մոսկվան հատուկ պատվիրակություններով, հայտագրերով և այլն։ Այս դիվանագիտությունն էլ ստիպեց արագացնել Զանգեզուրի գրավումը[9]։

1920 թ. հունիսի վերջերին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրո ուղղված իր զեկուցագրում Բաքվի վարած քաղաքականության մասին վերջումունքով արտահայտվում էր նաև Գ. Չիչերինը. «Բաքվի ընկերներն իրենց գործողություններով խափանում են փոխզիջումները, մերժում են Կենտկոմի պահանջած Հայաստանի հետ համաձայնության կնքումը»։ Սակայն, նա միաժամանակ ավելացնում է, որ «մենք պետք է, վերջապես, արագացնենք մեր ծրագրերի իրականացումը Թուրքիայում։ Այսպես հապաղել և ձգձգել գործը, ինչպես մենք ենք ձգձգում, չի կարելի»[10]։

Ռուս-հայկական բանակցությունների ձախողմանը զուգընթաց ակտիվանում էին խորհրդաքեմալական շփումները։ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Ս. Քեմալի ապրիլի 26-ի նամակին հաջորդում է Գ. Չիչերինի 1920 թ. հունիսի 3-ի պատասխան նամակը, որտեղ խորհրդային կողմը, ողջույններով քեմալականների՝ Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու առաջարկությունը, նշում է, որ Թուրքիայի և Հայաստանի միջև պետք է «հաստատել այնպիսի ճշտորոշ սահմանագծեր, որպիսիք պահանջում են արդարությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը»[11]։ Ի պատասխան հաջորդում են Մ. Քեմալի և Ազգային կառավարության արտգործնախարար Բեքիր Սամի բեյի նամակները, որոնցում նշվում է, որ Թուրքական Ազգային կառավարությունը «ընդունում է Ռուսական Խորհրդային Հանրապետության միջնորդությունը և տեսանգում ռազմական գործողությունները Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանում»[12] և Ազգային Մեծ ժողովի որոշումով պատվիրակություն է ուղարկում Մոսկվա՝ բանակցություններ վարելու համար[13]։

Խորհրդաքեմալական բանակցությունները սկզբնական շրջանում նույնպես անարդյունք էին, Թուրքերի՝ Հայաստանի վրայով Ռուսաստանի հետ հաղորդակցության կապ հաստատելու պահանջին, խորհրդային պատվիրակությունը, հանձինս Գ. Չիչերինի և Լ. Կարախանի, դնում էր Վանը, Բիթլիսը, Մուշը Հայաստանին վերադարձնելու հարցը։ Սակայն նման իրավիճակը երկար ձգձգվել չէր կարող. Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը պետք է կողմնորոշվեր, վերջապես ընտրություն կատարեր «Իմպերիալիստական» Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի ու «հեղափոխական» Թուրքիայի միջև։ Իրադարձությունների հետագա զարգացումը ցույց տվեց, որ այդ ընտրությունը հօգուտ վերջինների էր։

Հայաստանի հետ տարածքային վեճերում Ադրբեջանին և Թուրքիային պաշտպանելու պահանջներով էին հանդես գալիս ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն և 11-րդ Կարմիր բանակի Ռազմահեղափոխական խորհրդի առանձին անդամներ։ Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի հետ համատեղ 1920 թ. հուլիսի 10-ին Մոսկվա (ՌԿ(բ)Կ Կենտկոմ) ուղարկած նրանց նամակում պահանջվում էր Ղարաբաղը և Զանգեզուրը հանձնել Ադրբեջանին։ Դա հիմնավորվում էր նրանով, որ հակառակ դեպքում «կխափանվի հեղափոխության զարգացումը Թուրքիայում»[14]։

Ավելի վաղ, հուլիսի 8-ին, Ռուսաստանի ազգությունների գործերի ժողկոմ Ի. Ստալինը հեռագրում է Օրջոնիկիձեին. «Իմ կարծիքն այն է, որ չի կարելի անվերջ լարախաղացություն անել կողմերի միջև, պետք է պաշտպանել կողմերից մեկին, որոշակիորեն, ներկա դեպքում (խոսքը Ղարա-

9 Նույն տեղում, էջ 507։

10 Նույն տեղում, էջ 509։

11 Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 447—448։

12 Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1982, № 3, էջ 163։

13 Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 449։

14 Нагорный Карабах в 1918—1923 гг., с. 529—531.

բաղի մասին է—Կ. Խ.), իհարկե, Ադրբեջանին, Թուրքիայի հետ միասին։ Ես խոսել եմ Լենինի հետ, նա չի առարկում»[15]։ Այսքանից միանգամայն պարզ է, թե ինչու է իր մեղմ դիրքորոշումը Հայաստանի վերաբերյալ կտրուկ փոխում նաև Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության (ՌՍՖԽՀ) կառավարության արտգործժողկոմ Գ. Չիչերինը, խորհրդային ազդեցիկ ղեկավար գործիչներից թերևս միակը, որ զսպում էր Հայաստանի հանդեպ Թուրքիայի, Ադրբեջանի և բոլշևիկյան մի շարք գործիչների «հարձակողական քաղաքականությունը»։ 1920 թ. հուլիսի 30-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրո ուղղված «Հատկապես գաղտնի» զեկուցագրում Չիչերինը նշում է. «Անհրաժեշտ է օգտվել ընկ. Սերգոյի (Օրջոնիկիձեի—Կ. Խ.) ներկայությունից, որպեսզի լուծվի Հայաստանի հարցը՝ կապված քեմալականների դրության հետ։ Վերջիններս սպառազինության անբավարարության պատճառով մոտ են վախճանի։ ...Նրանց սպառազինություն հնարավոր է ուղարկել միայն տրանզիտով Հայաստանի վրայով։ ...Հիմա հայերը խփում են թուրքերին և խիստ լկտիացել են։

...Ընկ. Սերգոյի խոսքերով՝ փորձել դաշնակներից ստանալ Հայաստանի վրայով տրանզիտի իրավունք առանց որևէ վերահսկողության, ներկայումս անհնար է։ Ընկ. Սերգոն պնդում է, որ Հայաստանի խորհրդայնացման համար պահանջվում է ոչ այդքան շատ զորք։ ...Այդ դեպքում Հայաստանի խորհրդայնացումը հույժ անհրաժեշտ է։ Առանց դրա մենք չունենք իսկական շփում Թուրքիայի հետ։ Քեմալականների վախճանը մեզ ուժգին հարված կհասցներ Արևելքում»։ Հաջորդ օրը, 1920 թ. հուլիսի 31-ին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն քննարկում է Հայաստանի վերաբերյալ Գ. Չիչերինի այս առաջարկությունը և որոշում ընդունել այն[16]։

Այսպիսով, Ռուսաստանի բոլշևիկյան իշխանությունները հաստատում են «Հայաստանի խորհրդայնացման հույժ անհրաժեշտությունը», կարևորելով այն Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև «իսկական շրջում» հաստատելու անհրաժեշտությամբ։

1920 թ. օգոստոսին Թիֆլիսում վերսկսած ռուս-հայկական բանակցություններն ավարտվում են ՌՍՖԽՀ կառավարության և Հայաստանի միջև օգոստոսի 10-ին ստորագրած համաձայնագրով։ Թեև նրանով Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի «անկախությունը և լիակատար ինքնուրույնությունը», սակայն խորհրդային իշխանությունները համաձայնագիրն առավել կարևորում էին նրանով, որ իրավաբանորեն հաստատվում էր խորհրդային զորքերի կողմից Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի զինագրավումը, թեև՝ «ժամանակավորապես»[17]։ Եթե խորհրդային Ռուսաստանը Թիֆլիսի համաձայնագիրը դիտում էր որպես հակազդեցություն նույն օրը Սևրում կնքված հաշտության պայմանագրին, հասկացնելով, որ տարածաշրջանում հարցերը լուծելու է ոչ թե «միջազգային իմպերիալիզմը», այլ հենց ինքը, ապա Հայաստանի իշխանություններն այն ընդունում էին որպես «ժամանակավոր» համաձայնություն՝ իրենց հույսերը լիովին կապելով հենց Սևրի պայմանագրի հետ, համոզված լինելով, որ այն իրականանալու է եվրոպական հզոր պետությունների ջանքերով։ Եվ դա հասկանալի էր, չէ՞ որ Սևրի պայմանագիրն ավելի «ծանրակշիռ» էր, քան հայ-ռուսական համաձայնագիրը, չէ՞ որ նրանով «Անտանտը հայերին դնում էր այնպիսի մի բարձրության վրա, ուր նրանք երբեք չէին եղել»[18]։

---

15 Նույն տեղում, էջ 524։

16 Հայաստանի Հանրապետության հասարակական քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ), միկրոժապավենների հավաքածու № 1, գ. 2, թթ. 74—75։

17 Нагорный Карабах в 1918—1923 гг., с. 574—575.

18 Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 472։

Եվ հենց դրանով էր պայմանավորված, որ Անտանտի երկրներում, պրոթուրքական և հակահայկական ճամբարներում իրարանցում առաջացրած խորհրդահայկական Թիֆլիսի համաձայնագիրը Հայաստանի իշխանությունները որակում էին «ձևական»՝ վստահեցնելով Արևմուտքին, որ իրենք «շարունակում են մնալ հակաբոլշևիկ»[19]։

Իրավացի էր Հովհ. Քաջազնունին, խոստովանելով, որ «Սևրի դաշնագիրը շլացրել էր բոլորիս աչքերը, կաշկանդել միտքը, մթնացրել էր իրականության գիտակցությունը»[20]։ Իսկ իրականում, անգամ Ֆրանսիայի նախագահ Պուանկարեն խորհուրդ էր տալիս «չդիպչել» Սևրի պայմանագրին, որովհետև այն «փխրուն առարկա է, գուցե ջարդված ծաղկամանը»[21]։ Սակայն Հայաստանի իշխանություններն այդ գաղն իրականությունը չէին ցանկանում ըմբռնել, մնալով հավատարիմ իրենց արևմտյան դաշնակիցներին, մինչդեռ 1920 թ. ամռանն Ադրբեջանի բոլշևիկները և ազգայնական գործիչները (Հաջինսկի և այլք) Մոսկվայում գտնվող Թուրքական պատվիրակության հետ վարում էին վաղօրոք մշակված խիստ հակահայկական քաղաքականություն, Հայաստանին մեղադրելով իմպերիալիզմին դաշնակից լինելու մեջ և խորհրդային կառավարությանը դրդելով հանդես գալ նրա դեմ։

Թիֆլիսի՝ օգոստոսի 10-ի համաձայնագրից և Սևրի պայմանագրից հետո նրանց դրդումներն ավելի են սաստկանում։ 1920 թ. օգոստոսի 14-ին Բեքիր Սամի բեյի գլխավորած թուրքական պատվիրակությունը Մոսկվայում հանդիպում է Վ. Լենինի հետ, բողոքում Թիֆլիսի համաձայնագրով Նախիջևան-Շահթախթ երկաթուղին Հայաստանին տալու դեմ, նշելով, որ դա է Ռուսաստանը և Թուրքիան իրար կապող «միակ ճանապարհը», առանց որի Թուրքիան կուլ կգնա Արևմուտքին, չստանալով Ռուսաստանի օգնությունը։ Խորհրդային կառավարությունից թուրքերը պահանջում են համաձայնություն տալ, «գոնե բանավոր», «Շահթախթ-Սարիղամիշ գիծն իրենց կողմից գրավելու՝ բանակների միջև անմիջական շփում հաստատելու համար։ Խորհրդային կառավարության արտգործժողկոմ Գ. Չիչերինը, խորհրդակցելով հարցի մասին Գ. Օրջոնիկիձեի հետ, տալիս է դրական պատասխան, պայմանով, որ թուրքերը չանցնեն այդ գիծը[22]։ Նման որոշմանը կողմ է արտահայտվում նաև Վրաստանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Ս. Կիրովը, օգոստոսի 23-ին Չիչերինին ուղղած իր նամակում[23]։

Թուրքական կողմի այդ նկրտումներն իրենց ձևակերպումներն են ստանում օգոստոսի 24-ին Մոսկվայում նախապատրաստված ռուս-թուրքական «արտաքին և անկեղծ բարեկամության» պայմանագրում, որի տարբերակներից մեկի համաձայն կողմերը պարտավորվում են «փոխադարձ համաձայնությամբ կարճ ժամանակում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Ռուսաստանի և Թուրքիայի միջև հաղորդակցության ճանապարհները բացելու համար»[24]։

Հայ ժողովրդի կենսական շահերի դեմ էին ուղղված նաև 1920 թ. սեպտեմբերի 1—8-ը Կոմինտերնի գործկոմի կողմից Բաքվում հրավիրած Արևելքի ժողովուրդների Առաջին համագումարի ընդունած որոշումները։ Հայաստանը ներկայացվում է որպես «միջազգային իմպերիալիզմին դաշնակից պետություն» և կոչ է արվում «սրբազան պատերազմով» ելնել նրա

---

19 Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1967, № 3, էջ 51—56։

20 Հ. Քաջազնունի, նշվ. աշխ., էջ 33։

21 Севр и Лозанна, Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. М., 1927, с. 18.

22 Армянский вопрос. Энциклопедия, Е., 1991, с. 231—232.

23 Տե՛ս А. Н. Хейфец, Советская Россия и сопредельные страны Востока в годы гражданской войны (1918—1920), М., 1964, с. 131.

24 Армянский вопрос. Энциклопедия, с. 232.

դեմ[25], Համագումարին մասնակցող հայ կոմունիստ պատվիրակները հանդես էին դալիս խորհրդային հանրապետությունների օգնությամբ Հայաստանը խորհրդայնացնելու կոչերով, նշելով, որ դա է «փրկության միակ ուղին», այլապես Հայաստանը կդառնա «հեղափոխական Արևելքի վրա իմպերիալիստական Արևմուտքի հարձակման բազա», ինչը «կխայտառակի մեզ ամբողջ աշխարհի հեղափոխության առջև»[26]։

Համագումարին ընտրված Քարոզչության և գործողության խորհրդի նախագահությունը սեպտեմբերի 18-ին հավանություն է տալիս խորհրդի՝ սեպտեմբերի 17-ին ներկայացրած «Մերձավոր Արևելքի քաղաքական ներկա պահի մասին» զեկուցագրին՝ մշակած հանրահայտ թրքամոլ Ա. Սկաչկոյի կողմից։ Նրանում խիստ քննադատվում է 1920 թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագիրը, այն դիտվում է որպես Ռուսաստանի «թուլության» նշան, որը կարող էր մեծ հարված հասցնել թուրք ազգայնական (քեմալական—Կ. Խ.) շարժմանը և խափանել Արևելքում համաշխարհային հեղափոխության զարգացումը։ Սրանից խուսափելու համար առաջարկվում է օգնել քեմալականներին և նրանց միջոցով լուծել Հայաստանի խորհրդայնացման հարցը։ Ըստ այդ ծրագրի Ռուսաստանից պահանջվում էր «հավաքոր աղմուկ բարձրացնել Եվրոպայում» և «նոր հայ-թուրքական կոտորածները» կանխելու անհրաժեշտությունից ելնելով, որպես փրկարար ու հաշտարար մտնել Հայաստան և այնտեղ հաստատելով խորհրդային վարչակարգ, փրկել հայ ժողովրդին։ Այս ստոր փաստաթուղթը, որպես խորհրդի նախագահության «եզրակացություն», սեպտեմբերի 19-ին ուղարկվում է Կոմինտերնի գործկոմի նախագահություն և ՌԿ(բ)Կ Կենտկոմ, պատճենը՝ խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմատ[27]։ Սրանից ընդամենը մի քանի օր անց քեմալական զորքերը ներխուժում են Հայաստան՝ չհայտարարված պատերազմ սկսելով նրա հետ, իսկ 1920 թ. սեպտեմբերի 29-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը որոշում է «փողով և զենքով փաստացի օգնություն ցույց տալ քեմալականներին»[28]։ Միայն 1920 թ. սեպտեմբերի ընթացքում Էրզրումում թուրքական կառավարության և ռազմական հրամանատարության ներկայացուցիչներին խորհրդային Ռուսաստանի իշխանությունները փոխանցում են 200,6 կգ ոսկի[29]։

1920 թ. նոյեմբերի վերջերին Մոսկվա՝ Գ. Չիչերինին (պատճենը՝ Վ. Լենինին) Ի. Ստալինի հղած հեռագրում, որտեղ նշվում է Վրաստանի հնարավոր խորհրդայնացման մասին, միանշանակ ընդգծված է, որ «տարբերակներից լավագույնը Թուրքիայի հաջող պատերազմն է Վրաստանի հետ, ինչը Ռուսաստանին հնարավորություն կտա միջամտել միջնորդի և փրկարարի կեցվածքով»[30]։ Պարզ է, որ այդ «տարբերակը» լավագույնն էր ընտրվել խորհրդային ղեկավարության կողմից նաև Հայաստանի վերաբերյալ։ Եթե չլիներ նրանց նյութական օգնությունը և բարոյական աջակցությունը, քեմալականները չէին համարձակվի պատերազմել Հայաստանի հետ, ինչպես չհամարձակվեցին 1920 թ. ամռանը՝ նրա նվաճման հարցը կապելով «բոլշևիկյան կառավարության և Թուրքիայի ընդհանուր փոխհարաբերությունների հետ»[31]։

---

25 Первый съезд народов Востока (Стенографический отчет). Баку, 1920.

26 Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Ե., 1960, էջ 371, 377։

27 Հայաստանի Հանրապետության Նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՆՊ ԿՊԱ), ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 1—3։

28 ՀՀ ՀՔԿԿ ԿՊԱ, հավաքածու № 1, գ. 2, թ. 106։

29 Документы внешней политики СССР, т. III, М., 1959, с. 675.

30 ՀՀ ՀՔԿԿ ԿՊԱ, հավաքածու № 1, գ. 2, թ. 142։

31 Տե՛ս Ս. Պ. Աղայան, Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Ե., 1982, էջ 321։

Պատերազմում Թուրքիայի նպատակն էր «ոչնչացնել հայկական բանակն ու հայկական պետությունը»[32], 1920 թ. սեպտեմբերի 14-ի թվակիր նամակում Արևմտյան ռազմաճակատի հրամանատար Ալի Ֆուադ Չեբեսոյին Մ. Քեմալը հայտնում էր նաև, որ «Հարկավոր է չհրաժարվել նաև Ադրբեջանը Թուրքիային միացնելու մտքից»[33]։

Թեև խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան իշխանությունները աջակցում էին քեմալականներին, սակայն այլ կերպ էին վերաբերվում թուրքական հարձակմանը Հայաստանի վրա։ Հայաստանի հանրապետությունում ՌՍՖՍՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանը 1920 թ. հոկտեմբերի 5-ին հղած հեռագրում արտգործժողկոմ Գ. Չիչերինը հուշում էր, որ քանի դեռ թուրքերը Շահթախթ-Սարիղամիշ գծի վրա են, հոգ չէ անհանգստանալ, բայց միևնույն ժամանակ «մենք չենք կարող թույլ տալ նրան (Հայաստանը—Կ. Խ.) ճզմելու»[34]։

1920 թ. հոկտեմբերի 14-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն որոշում է հաստատել Գ. Չիչերինի առաջարկությունները Հայաստանի վերաբերյալ։ Դրանք էին. «1) Համաձայնել Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու անհրաժեշտության մասին Հայաստանի ԿԿ Կենտկոմի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի կարծիքի հետ, 2) նրան քաղաքական օգնություն ցույց տալ թուրքերի առաջխաղացումը կասեցնելու համար և 3) պաշտպանել նոր, խորհրդային կառավարությունը»[35]։ Իսկ այս որոշումից երկու շաբաթ անց, հոկտեմբերի 28-ին, Երևանում Հայաստանի և Ռուսաստանի հաշտության պատվիրակությունների ստորագրած «Ծգրափակիչ որոշման արձանագրությունը» և նրան կից «Հաշտության պայմանագրի» նախագիծը մնացին թղթի վրա, որովհետև հակասում էին 1920 թ. հոկտեմբերի 14-ի քաղբյուրոյի նշված որոշմանին։ Նոյեմբերի 16-ին Մոսկվա ուղարկած հեռագրում Ստալինը նշում է, որ հոկտեմբերի 28-ի պայմանագրի նախագծի մասին «ավելորդ է խոսել, որովհետև այն ետ է մնացել իրադարձություններից այնպես, ինչպես ետ է մնացել տրանզիտի պահանջը (Հայաստանի վրայով—Կ. Խ.)»[36]։ 1920 թ. նոյեմբերի 4-ին Բաքվում կայացած (ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի համատեղ նիստում, Ստալինի մասնակցությամբ, որոշվել էր մերժել պայմանագրի նախագիծը։

Այո՛, պայմանագիրն իրավացիորեն «ետ էր մնացել իրադարձություններից». մինչ Բ. Լեգրանը պայմանագրի նախագիծը հասցնելու էր Բաքու՝ ստանալու Ստալինի և Բաքվի «օրհնանքը», թուրքական բանակը հոկտեմբերի 30-ին արդեն գրավել էր Կարսը, իսկ նոյեմբերի 7-ին՝ Ալեքսանդրապոլը (Գյումրին)։

1920 թ. նոյեմբերի 6-ին հաղորդելով Հայաստանում տիրող դրության մասին Մոսկվա, Ստալինը նշում է. «Եթե ընկնի Ալեքսանդրապոլը, չի բացառվում դաշնակների կողմից Ադրբեջանի պես իշխանությունը մեզ փոխանցելու հնարավորությունը»[37]։ Նույն օրը Չիչերինը նրան հեռագրում է. «Անհրաժեշտ է փրկել Հայաստանը նրա խորհրդայնացման գնով», որովհետև եթե այնտեղ գոնե մեկ ռուս զինվոր լինի, թուրքերն առաջ չեն շարժվի[38]։ Իսկ նման վտանգն, իրոք, չէր բացառվում. 1920 թ. նոյեմբերի 8-ին, երբ թուրքական զորքերն արդեն գտնվում էին Ալեքսանդրապոլում, թուր-

---

32 М. Кемаль, Путь новой Турции, т. III, М., 1932, с. 102.

33 A. F. Cebesoy. Milli müdadele hatıraları. Istanbul, 1953, s. 139—140.

34 Տե՛ս Մ. Արզումանյան, Արտավիրքից վերածնունդ, Ե., 1973, էջ 333։

35 Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 456։

36 ՀՀ ՀՔԿԿ ԿՊԱ, հավաքածու № 1, գ. 2, թ. 139։

37 Նույն տեղում, թ. 135։

38 Տե՛ս Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում, Ե., 1982, էջ 346—347։

քիայի արտգործնախարար Ահմեդ Մուխտար փաշան հետևյալ դիմումն է հղում արևելյան ռազմաճակատի հրամանատար Կարաբեքիր փաշային. «Հայաստանը գտնվում է խիստ լայնատարած մուսուլմանական մի հողատարածքի վրա, հետևաբար, անհրաժեշտ է նրան ինչպես քաղաքականապես, այնպես էլ փաստականորեն ոչնչացնել։ Հարկ է հաշվի առնել, որ քաղաքական ընդհանուր իրադրությունն ու մեր հզորությունը բարենպաստ են այդ մտադրությունն իրականացնելու համար»[39]։

1920 թ. նոյեմբերի 11-ին Ռուսաստանը ստանձնում է միջնորդությունը պատերազմող կողմերի միջև[40]։ Նույն օրը Լոնդոն՝ Ռուսաստանի առևտրական ներկայացուցիչ Լ. Կրասինին հաղորդած ռադիոհեռագրում Գ. Չիչերինը նշում է. «Թուրք ագգայնականների վերջին հաջողություններից հետո Հայաստանի դրությունը շատ տագնապալից է, և Ռուսաստանի միջնորդությունը հենց ժամանակին է»[41]։

Միջնորդությունն իրականացնելու համար խորհրդային կառավարությունը Հայաստան է ուղարկում իր լիազոր ներկայացուցիչ Պ. Մղիվանուն (Բուդու)։ Վերջինս և Բ. Լեգրանը նոյեմբերի 19-ին Երևանում հանդիպում են Հայաստանի նախարարապետ Հ. Օհանջանյանի և զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի հետ։ Ռուսաստանի ներկայացուցիչները հանդիպման ժամանակ նշում են, որ իրենց «միջնորդությունը կարող է ունենալ ռեալ հետևանքներ» միայն Հայաստանում ռուսական բանակի առկայության պայմաններում, որովհետև «Հայաստանի համար նա (Թուրքիան—Կ. Խ.) Ռուսաստանի հետ չի պատերազմի»,—եզրակացնում է Լեգրանը։ Մղիվանին իր հերթին ավելացնում է. «Վերջապես հարկավոր է դա գիտակցել և անմիջապես ընդունել խորհրդայնացումը», ինչը կփրկի հայ ժողովրդին «վերջնական ոչնչացումից»։ Փոխարենը նրանք խոստանում են Հայաստանի 1914 թ. սահմանների վերականգնում[42]։

Սա, փաստորեն, Հայաստանի խաղաղ խորհրդայնացման առաջարկ-պահանջ էր։ Ընկնելով քեմալախորհրդային ռազմադիվանագիտական ուժգին ճնշման տակ, Հայաստանի իշխանություններն իրենց հերթին ձգտում էին հայ-ռուսական և հայ-թուրքական բանակցությունների միջոցով ելք գտնել դժվարին կացությունից։ Բայց սա արդեն 1920 թ. ամառը չէր, երբ Հայաստանի թե՛ քաղաքական և թե՛ ռազմական դրությունը համեմատաբար կայուն էր, ժամանակն անվերադարձ կորսված էր. թուրքական զորքերն իրենց մահաբեր ներխուժման սպառնալիքի տակ էին պահում Հայաստանի սիրտը՝ Սրարատյան դաշտավայրը, վերջնականապես երես էր թեքել «քաղաքակիրթ Եվրոպան»՝ միշտ պատրաստ Բաքվի նավթի և սևծովյան նեղուցների համար զոհաբերել ամբողջ հայ ժողովրդին, Ռուսաստանն էլ, մի կողմ թողնելով Հայաստանի հետ անարդյունք բանակցությունների քաղաքականությունը, սկսել էր «վճռական գործողություններ»։

Քեմալականների հաղթական երթը Հայաստանով չէր կարող չանհանգստացնել խորհրդային իշխանություններին, նրանց մեջ մեծ էր այն մտավախությունը, որ «թուրքերը խորամանկում են և հետապնդում իրենց սեփական նպատակները»,—1920 թ. նոյեմբերին Ստալինը հաղորդում էր Մոսկվա՝ Չիչերինին և Լենինին։ Վ. Լենինին հղած մի այլ հեռագրում նա նշում էր նաև, որ թուրքերը «ձգտում են ունենալ ընդհանուր սահման Ադրբեջանի հետ»[43]։

---

39 Տե՛ս Ե. Սարգսյան, Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Ե., 1994, էջ 170—171։

40 Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 458—459։

41 Нагорный Карабах в 1918—1923 гг., с. 598—599.

42 Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1967, № 3, էջ 85—92։

43 ՀՀ ՀՔԿԿ ԿՊԱ, հավաքածու № 1, գ. 2, թ. 135, 150։

Իրադարձությունների նման զարգացումը կանխելու համար ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի քարտուղար Գ. Օրջոնիկիձեն հայտնում է Ստալինին իր, ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Ադրբեջանի Հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի ընդհանուր կարծիքը. «Այլևս չսպասել և անմիջապես սեպաձև խրվել (Թուրքերի և Ադրբեջանի միջև—Կ. Խ.)», ավելացնելով, որ դա «միաժամանակ կարագացնի հաջորդ օպերացիայի նախապատրաստումը (խոսքը Հայաստանի խորհրդայնացման մասին է—Կ. Խ.)»։ Ստալինը խորհուրդ է տալիս «դեռ մի փոքր հետաձգել» և սկսել «այն պահին, երբ մենք հնարավորություն կունենանք իրականացնել առաջին ու նրանից անմիջապես հետո և երկրորդ (Հայաստանի խորհրդայնացման—Կ. Խ.) օպերացիան»։ Հրահանգավորելով Օրջոնիկիձեին՝ «առայժմ պատրաստել հեղկոմը, որպեսզի այն գտնվի զորքերում», Ստալինը նշում է, որ ինքը պետք է խոսի «ժերուկի (Լենինի—Կ. Խ.) հետ»[44]։

Տեղեկանալով Ստալինից այդ ամենի մասին, Վ. Լենինը պատասխանում է, որ «առանց քաղբյուրոյի գումարման ինքը չի կարող որևէ պատասխան տալ», նա առաջարկում է Ստալինին՝ կամ գործել իրեն տրված լիազորությունների հիման վրա, կամ էլ անձամբ վերադառնալ Մոսկվա՝ «Կովկասյան հարցն ամբողջությամբ լուծելու համար»։ Ստալինը նախընտրում է վերջին տարբերակը և, տալով Օրջոնիկիձեին «նախապատրաստական աշխատանք վարելու և Մոսկվայից կարգադրություններ սպասելու հանձնարարական», ուղևորվում է Մոսկվա[45]։ 1920 թ. նոյեմբերի 27-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյում Ստալինը հանդես է գալիս Կովկասի դրության մասին զեկուցումով։ Նույն օրը քաղբյուրոյի ընդունած որոշման մեջ, որի նախագիծը գրել էր նիստը նախագահող Վ. Լենինը, նշվում էր. «Ո՛չ Վրաստանի, ո՛չ Հայաստանի, ո՛չ Պարսկաստանի վրա արշավելու խնդիր չդնել»[46]։ Սակայն, չսպասելով Մոսկվայի կարգադրություններին, արդեն նոյեմբերի 25-ին 11-րդ Կարմիր բանակի Ռազմահեղափոխական խորհրդի և Հայհեղկոմի միջև ձեռք է բերվում համաձայնություն, ըստ որի, 20-րդ դիվիզիայի հրամանատարության՝ առաջարկվում է առանց հապաղելու շարժել 60-րդ բրիգադան Դիլիջան և այնտեղից՝ Երևան[47]։

Ձգտելով տպավորություն ստեղծել, որ Հայաստանը խորհրդայնացվում է միմիայն հայ ժողովրդի ցանկությամբ և Հայհեղկոմի ուժերով, խորհրդային իշխանությունները վերջինիս տրամադրության տակ են դնում Կարմիր բանակի շարքերից առանձնացված «Հատուկ խնդիր ունեցող գունդ (Հայկական)»՝ «վերջին քաղաքական դիրեկտիվների համաձայն օգտագործելու համար»[48]։ Վերջինիս ուղեկցությամբ էլ ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի կազմած Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն, Ս. Կասյանի նախագահությամբ, 1920 թ. նոյեմբերի 29-ին Ադրբեջանից մտնում է Իջևան և «Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ» երկիրը հռչակում խորհրդային հանրապետություն[49]։ Իրականում, Հայաստանը հռչակվում էր խորհրդային ոչ թե «ժողովրդի կամքով ու ցանկությամբ» և նրա կողմից իբր թե բարձրացրած ապստամբության, այլ՝ միայն Հայաստանի կոմունիստական կուսակցության և Հայհեղկոմի անունից։

Նոյեմբերի 30-ին Հայհեղկոմի անդամ Ավիս Նուրիջանյանը տեղեկացնում էր Գ. Օրջոնիկիձեին. «Մեր ժամանելը (հեղկոմի և Կարմիր բանակի մուտքը Հայաստան—Կ. Խ.) ճիշտ ժամանակին էր, որովհետև կազմակերպված գյուղացիները պետք է ապստամբեին հաջորդ օրը (նոյեմբերի

---

44 Նույն տեղում, թ. 144—147։

45 Նույն տեղում, թ. 148—151։

46 ՀՀ ՀՊԿՓ ԿՊԱ, ֆ. 4050, ց. 1, գ. 6, թ. 1։

47 Նույն տեղում, ֆ. 1022, ց. 8, գ. 330, թ. 1։

48 Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան... Հայաստանում, էջ 400։

49 Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, Ե., 1974, էջ 27։

30-ին—Կ. Խ.), մի խումբ ընկերների գլխավորությամբ, որոնց մենք նախորոք ուղարկել էինք այդ շրջան՝ անլեգալ աշխատանքի»։ Նա նշում է նաև, որ «ամեն ինչ վերցվում է հաշվառման։ Ամեն ինչի համար վճարվում է», խորհուրդ է տալիս «փողը չափսոսալ»[50]։

Նոյեմբերի 30-ին Հայհեղկոմը ողջույնի հեռագիր է հղում Վ. Լենինին և դարձյալ «Հայաստանի բոլոր բանվորների և գյուղացիների անունից» խնդրում Կարմիր բանակի օգնությունը[51]։

Մինչ Մոսկվան երկմտում էր բանակը Հայաստան մտցնելու հարցում, Գ. Օրջոնիկիձեի թույլտվությամբ այն արդեն Հայաստանում էր։ Նոյեմբերի 30-ին Օրջոնիկիձեն հաղորդում է 11-րդ բանակի 20-րդ դիվիզիայի հրամանատար Մ. Վելիկանովին. «Ցմոռանաք առաջ շարժվել Ղաբաքիլիսայի (Վանաձոր) կողմը և գրավել, եթե, իհարկե, այն չի գրավվում թուրքերի կողմից։ Մեր զորքերի հանդիպումը թուրքերի հետ կազմակերպեք հանդիսավորությամբ»։ Վելիկանովից և Հայաստանի Ռազմհեղկոմի անդամներից Օրջոնիկիձեն պահանջում է նաև «թույլ չտալ կամայականության որևէ դրսևորում», «չդիմել որևէ բռնությունների», «բնակչության հանդեպ լինել անսահման կոռեկտ, թույլ չտալ Հատուկ բաժնին և Արտակարգ հանձնաժողովին փչացնել գործը», «լինել զգույշ և միլիոն անգամ զգույշ»[52]։ Սակայն, ինչպես նրան հայտնում են Հայհեղկոմի անդամները, բանակի երթը Հայաստանով հարթ չէր ընթանում, զորամասերի կողմից «թույլ են տրվում անթույլատրելի արարքներ։ Պարենի բացակայության պատճառով բանակը վերցնում է բնակչության բոլոր պաշարները»[53]։ Նման դեպքերը բացառելու համար Օրջոնիկիձեն հրամայում է Վելիկանովին՝ այդպիսի զորամասերի հրամանատարներին «տեղն ու տեղը գնդակահարել» նշելով, որ նրանց «խուլիգանության համար պատասխանատու եք միայն դուք»։ Նա պահանջում է նաև մտածել բանակի մատակարարման մասին՝ առանց «բնակչությանը ծանրաբեռնելու»[54]։

1920 թ. նոյեմբերի 30-ին տեղեկանալով Բ. Լեգրանից, որ «Հայաստանի հեղկոմը ոտք է դրել Հայաստան և ձեռնարկել նրա խորհրդայնացումը», իսկ Կարմիր բանակն էլ արդեն շարժվում է Հայաստանով, Հանրապետության կառավարությունը դեկտեմբերի 1-ին ընդունում է Բ. Լեգրանի՝ Հայաստանի խորհրդայնացման վերջնագիր-առաջարկությունը, դնելով «որոշ պայմաններ»[55]։ Կառավարության լիազորությամբ նախարարներ Դրաստամատ Կանայանը (Դրոն) և Հ. Տերտերյանը դեկտեմբերի 2-ին Երևանում Բ. Լեգրանի հետ ստորագրում են հայ-ռուսական համաձայնագիր, որով Հայաստանը «հայտարարվում է անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն», իսկ իշխանությունը, մինչև Ռազմհեղկոմի ժամանումը Երևան, անցնում է զինվորական հրամանատարությանը՝ Դրոյի և ՌՍՖՍՀ կոմիսար Օ. Սիլինի ղեկավարությամբ[56]։ Վերջիններս էլ, հիմք ընդունելով հանձնագիրը, նույն օրը ստորագրում են «Հայաստանը խորհրդային հանրապետություն հայտարարելու մասին» հրամանը[57]։

1920 թ. դեկտեմբերի 2-ին ստանալով Հայաստանը խորհրդային հայտարարելու մասին Բ. Լեգրանի հեռագիրը, Գ. Օրջոնիկիձեն շտապում է հայտնել Մոսկվա՝ Վ. Լենինին, Հայաստանում խորհրդային իշխանության

---

50 ՀՀԿԿ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 367, թ. 1։

51 Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 31—32։

52 ՀՀԿԿ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 367, թ. 3—4։

53 Նույն տեղում, թ. 8։

54 Նույն տեղում, թ. 11։

55 Նույն տեղում, ֆ. 1022, ց. 3, գ. 272, թ. 42, թ. 44։

56 Сборник действующих договоров, М., 1922, с. 14—15.

57 Հրամանը մտցվեց ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու (պրակ. 1, էջմիածին, 1921, էջ 5), բայց հետագայում հանվեց այնտեղից։

հաղթանակի մասին և առաջարկում է Ռուսաստանի կառավարությանը «Հեղկոմի հրավերի համաձայն պաշտոնապես թույլատրել կարմիր բանակի զորամասերը մտցնել Հայաստան (մինչդեռ, ինչպես նշել ենք, նրանք արդեն գտնվում էին Հայաստանում—Կ. Խ.)»[58], 1920 թ. դեկտեմբերի 3-ին Ռ.Կ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնարարությամբ Ի. Ստալինը հայտնում է Բաքու՝ Օրջոնիկիձեին, որ թույլատրվում է կարմիր բանակի զորամասերը մտցնել Հայաստան[59]։

1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագիրը Հայհեղկոմի սրտովը չէր, նա համաձայն չէր ստվերում մնալ, այլ ձգտում էր Հայաստանի խորհրդայնացման դափնիներն ամբողջովին վերագրել իրեն։ Հեղկոմի նախագահ Ս. Կասյանը դեկտեմբերի 3-ին Լեգրանի հետ կայացած հեռագրաղրույցում մատնանշում է, որ «ոչ թե Դրոն, այլ Հայաստանի հեղկոմն է Հայաստանը հռչակել անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետություն» և դրանից ելնելով պետք է «անվավեր ճանաչվի և Ձեր համաձայնությունը Դրոյի հետ»։ Բ. Լեգրանը նրան պատասխանում է, որ «դա ամենևին չի փոխում իրավիճակը և ոչ ոք իրավունք չունի չեղյալ հայտարարել իմ կողմից ստորագրված համաձայնագիրը»[60]։ «Լեգրանի վիճակը հասկանալի է,—հաղորդում էր Մոսկվա Գ. Օրջոնիկիձեն,—նա չափից ավելին է խոստացել հին հայկական կառավարությանը»[61]։

Թեև Հայհեղկոմը «անվավեր ճանաչեց» Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը, սակայն նրա նշանակությունը թերագնահատել չի կարելի։ Ներքաղաքական տեսակետից դա արտահայտվում էր նրանում, որ Հայաստանի կառավարությունն առանց որևէ դիմադրության կամ բռնության հեռանում էր իշխանությունից։ Դրանով իսկ կանխվում էին դեպի Երևան շարժվող Հայհեղկոմի և կարմիր բանակի հնարավոր բախումները Հայաստանի բանակային և այլ զինված կազմավորումների հետ։ Վերջապես, երկիրը և ժողովուրդը հոգեբանորեն նախապատրաստվում էին խորհրդային զորքերի և նոր իշխանությունների գալուն։ Նման հաշտ մթնոլորտը պահպանելու և անգամ Հայաստանում վարչաձևի և իշխանությունների փոփոխման գործընթացին հանդիսավորություն հաղորդելու համար Հայհեղկոմին «ընդառաջ ուղարկվում են ավտոմեքենաներ»[62]։

Մեծ էր դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի նշանակությունը նաև միջազգային արտաքին քաղաքական տեսակետից։ Խորհրդային Ռուսաստանը և Հայաստանը դառնում էին դաշնակից պետություններ, իրավական հիմք էր նախապատրաստվում Հայաստանի տարածքում ՌՍՖԽՀ զինված ուժերի տեղակայման համար, ինչը կանխելու էր Հայաստանում գտնվող թուրքական բանակի հնարավոր առաջխաղացման դեռևս չվերացած վտանգը։ Պատահական չէր, որ հայ-ռուսական «համաձայնագիրը Թուրքիայի «հավանությանը» շարժանացավ»[63]։

Հայ-ռուսական համաձայնագրի շուտափույթ ստորագրման դիվանագիտական քայլն իրավական հիմք և հնարավորություն տվեց խորհրդային իշխանություններին երբևիցե չճանաչել համաձայնագրի ստորագրումից ընդամենը մի քանի ժամ անց Հայաստանի նախկին կառավարության լիազորած հայկական պատվիրակության կողմից Ալեքսանդրապոլում ստորագրված անօրինական հայ-թուրքական հաշտության պայմանագիրը, որով Հայաստանը ոչ միայն կորցնելու էր զգալի տարածքներ, այլ փաստորեն կրելու էր ներքին ինքնավարության որոշ սահմանափակումներ։

---

58 Տե՛ս Ս. Պ. Ա ղ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 343։

59 Տե՛ս նույն տեղում։

60 ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1154, թ. 1։

61 Նույն տեղում, հավաքածու № 1, գ. 2, թ. 183։

62 Նույն տեղում, ֆ. 4033, ց. 2, գ. 1154, թ. 1։

63 Հ. Ա. Ա վ ե տ ի ս յ ա ն, Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997, էջ 353։

1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի անօրինական պայմանագիրն ուղղված էր ինչպես հայ ազգային շահերի, այնպես էլ խորհրդային Ռուսաստանի դեմ և միայն Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը և Հայաստանի խորհրդայնացումը հնարավորություն տվեցին աղատվել նրա շղթաներից և կործանարար հետևանքներից։ Այս էր հայ-ռուսական համաձայնագրի այն ներքին և արտաքին քաղաքական նշանակությունը և անհրաժեշտությունը, որոնք, գուցե և գիտակցելով, ստիպված էր ընդունել առանց որևէ խոչընդոտի դեկտեմբերի 5-ին Երևան ժամանած Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը, խոստովանելով Գ. Օրջոնիկիձեին, որ «Երևանում համոզվեցի Լենինի տակտիկայի ճշտության մեջ»[64]։

Այսպիսով, քեմալաբոլշևիկյան ռազմադիվանագիտական ուժգին ճնշումների տակ դադարեց գոյություն ունենալ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, նրան փոխարինեց խորհրդային Հայաստանի Երկրորդ Հանրապետությունը։ Ստեղծված միջազգային-քաղաքական բարդ իրավիճակում, համայնավարների որդեգրած արևելյան քաղաքականության, խորհրդաքեմալական համագործակցության պայմաններում Հայաստանի խորհրդայնացումն անխուսափելի էր։

АРМЕНИЯ В СФЕРЕ СОВЕТСКО-КЕМАЛИСТСКИХ ОТНОШЕНИЙ В 1920 ГОДУ

К. Г. ХАЧАТРЯН

Резюме

Восточная политика большевиков, основанная на сотрудничестве с кемалистской Турцией против западного империализма, требовала установления непосредственной связи между Россией и Турцией через Армению. Исходя из этого, Политбюро ЦК РКП (б) 31 июля 1920 г. принимает предложение Г. Чичерина о «необходимости советизации Армении» для осуществления «настоящего контакта с Турцией».

В середине сентября 1920 г. большевиками разрабатывается документ о советизации Армении путем кемалистского нашествия, а уже в конце сентября, опираясь на помощь и содействие Советской России, кемалисты развязывают турецко-армянскую войну, преследуя собственные пантюркистские цели: уничтожение Армении и стремление иметь общую границу с Азербайджаном.

Хотя большевики поддерживали кемалистов, но мириться с их захватническими целями в Закавказье не могли. В конце ноября—начале декабря 1920 г. II-я Красная армия Советской России «вклинилась» между кемалистами и Азербайджаном, одновременно советизировав Армению и установив через нее прямую связь большевистской России с кемалистской Турцией.

---

64 Տե՛ս Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920—1922 թթ.), Ե., 1987, էջ 188—189։